ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 7 հուլիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա. Խաչատրյանի

Քննության առնելով քաղաքացի Գագիկ Գեղամյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Քաղաքացի Գագիկ Գեղամյանը 16.06.2014թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

Դիմողը նշում է, որ մեղադրողը հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ հանդես է եկել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը փոխելու մասին միջնորդությամբ, և ամբաստանյալին կրկին նույն մեղադրանքն է առաջադրվել՝ ո՛չ փոխելով արարքի իրավաբանական որակումը և ոչ՛ էլ հանցակազմի հատկանիշների բովանդակությունը:

Դիմողի կարծիքով, «Մեղադրողը, ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը փոխելու վերաբերյալ որոշում կայացնելով, վերականգնել է նախկինում ճախողված նախաքննությունը»:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ.

Վիճարկվող նորմը դատական ակտերով չի կիրառվել դիմողի նկատմամբ:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ՀՀ սահմանադրական դատարանում կարող է վիճարկել միայն իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, նշելով, որ դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը ... որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է որևէ օրենքի դրույթ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու իրավասու սուբյեկտ չէ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն տվյալ դեպքում դիմողն իրավասու չէ դիմելու սահմանադրական դատարան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով և 69-րդ հոդվածով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Գագիկ Գեղամյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

7 հուլիսի 2014 թվականի
ՍԴԴԿՈ/2-8